ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» հունիսի 2014թ. N_____Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող 130.9քմ մակերեսով տարածքը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 06.07.2004թ. հ.1459709 վկայական) անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2017 թվականի հունիսի 31-ը ժամկետով տրամադրել «Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի Հայաստանի ազգային հանձնաժողով» /ԻԿՈՄՈՍ/Հայաստան/ և «Պատմական հուշարձանների պահպանման հայկական դաշնություն» հասարակական կազմակերպություններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի Հայաստանի ազգային հանձնաժողով» /ԻԿՕՄՕՍ/Հայաստան/ և «Պատմական հուշարձանների պահպանման հայկական դաշնություն» հասարակական կազմակերպությունները դիմել են Երևանի քաղաքապետարան՝ Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող և «Պատմական հուշարձանների պահպանման հայկական դաշնություն» հասարակական կազմակերպության կողմից զբաղեցրած տարածքի նկատմամբ հասարակական կազմակերպությունների անհատույց օգտագործման իրավունքը ձևակերպելու խնդրանքով:

Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող տարածքը, համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.07.2004թ. հ.1459709 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Նշված կազմակերպությունների նպատակն է նպաստել հուշարձանների և պատմական վայրերի պահպանությանը, ամրակայմանը, վերականգնմանը և օգտագործմանը ժամանակակից պահանջների ու միջազգային օրենքների համաձայն ազգային և միջազգային մակարդակներում: Կազմակերպությունները հավաքագրում, ուսումնասիրում, հրատարակում և տարածում են հուշարձանների և պատմական վայրերի պահպանության, ամրակայման, վերականգնման և օգտագործման ոլորտում գիտական հիմնախնդիրները և ժամանակակից մեթոդները, մասնակցում են միջազգային համագործակցությանը և աջակցում հուշարձանների և պատմական վայրերի գիտա-տեղեկատվական կենտրոնների զարգացմանը:

Կազմակերպությունները համագործակցում են օտարերկրյա պետությունների նմանատիպ կազմակերպությունների հետ և նպաստում պատմամշակութային ժառանգության արժեքների հաշվառման, վավերագրման, պահպանության, ամրակայման վերականգնման և բարեկարգման բնագավառների զարգացման հիմնախնդիրներին:

Կազմակերպությունները մասնագիտական աշխատանք են իրականացնում ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաև նրա սահմաններից դուրս գտնվող հայկական ժառանգության պահպանության և հանրահռչակման բնագավառում՝ գործունեության առանցքում դնելով միջազգային առաջատար փորձը, օրենսդրական գործիքները և մեթոդոլոգիան:

Հաշվի առնելով ընկերությունների կողմից իրականացվող գործունեության կարևորությունը ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող 130.9քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2017 թվականի մայիսի 31-ը ժամկետով «Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի Հայաստանի միջազգային հանձնաժողով» /ԻԿՕՄՕՍ/Հայաստան/ և «Պատմական հուշարձանների պահպանման հայկական դաշնություն» հասարակական կազմակերպություններին տրամադրելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող տարածքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող տարածքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ